ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կայքը կպայքարի հակահայկական քարոզչության դեմ

Արամ Սիմոնյան
Լուսանկարը՝ Photolure

Երևան: Մեդիամաքս: ԵՊՀ Հայագիտական

www.armin.am կայքը կպայքարի Ադրբեջանի եւ Թուրքիայի հակահայկական քարոզչության դեմ:

Ինչպես հաղորդում է Մեդիամաքս-ը, այս մասին այսօր ասել է Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Արամ Սիմոնյանը:

Նա ասել է, որ ինստիտուտը հետազոտություններ է իրականացնում ոչ ավանդական մեթոդներով՝ ուշադրությունը սեւեռելելով քաղաքական նշանակություն ունեցող թեմաների վրա, որոնք չափազանց կարեւոր են Հայաստանի դրական իմիջի տեսանկյունից:

Ինստիտուտի տնօրենը տեղեկացրել է, որ 2008-2011 թթ. ընթացքում հրատարակվել են 49 գրքեր, մեթոդական ձեռնարկներ եւ թարգմանություններ, 149 հոդվածներ, 200-ից ավելի քարտեզներ, որոնք շարունակաբար ներկայացվում են նաեւ ինստիտուտի պաշտոնական կայքում:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանն էլ ասել է, որ «երիտասարդ պատմաբանները, ցավոք, չեն կարողանում զբաղվել հայագիտությամբ, քանի որ ֆինանսական տեսանկյունից այն հեռանկարային չէ, սակայն ուրախալի է, որ նման արդյունքներ են արձանագրվել ոլորտում»: